ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշատի 1

№ 3910-Ա « 11 » հոկտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի Հ.4257-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 15.05.2024թ. հ.20-Էլ-127170-23 եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 16.10.2023թ. հ.ԱՏ-16102023-01-1007 տեղեկանքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 04.02.2022թ. հ.562, 26.05.2022թ. հ.4111, 19.04.2023թ. հ.7806 և հ.7805 վկայագրերը, քաղաքացի Արա Բաղոյանի՝ ի դեմս ներկայացուցչի դիմումները.

1. Երևանի քաղաքապետի 2008 թվականի սեպտեմբերի 23-ի «Արշակունյաց պողոտայի 2-րդ նրբանցքի հ.8/1 բնակելի տան նկատմամբ Սամվել, Արտաշես, Արա Բաղոյանների և Անահիտ Աղլամազյանի գույքային իրավունքները վերականգնելու մասին» հ.4257-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա 2-րդ նրբանցք հ.8/1 հասցեում գտնվող հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման».

2) Որոշման վերնագրում և 1-ին կետում՝ «Սամվել, Արտաշես, Արա Բաղոյանների և Անահիտ Աղլամազյանի» բառերը փոխարինել «Արտաշես, Արա, Սիրուն Բաղոյանների» բառերով.

3) Որոշման 1-ին կետում՝ «200.73քմ» բառը փոխարինել «151.70քմ» բառով.

4) ուժը կորցրած ճանաչել Որոշման 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերը:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ